

ներ գիւղը, երկար խառութիւններէ վերջ կը գտնայ իբր թէ նշխարաց մնացեալ մասը, զողոցող «պատրիկ»ներուն (Լատին հայր) հետ միասին Թավրէզ Խօջայ Նազարին կը բերէ զանոնք Շահի դատաստանին յանձնելու եւ նոյն ատեն կը խնդրէ, որ նշխարները «Փռանկըստան» թոյլ շտրուի տանիլ, այլ մնան անդ՝ հայոց մօտ: Շահը կը հաւանի եւ նշխարները Սպահան կը ղրկուին:

«Եւ ապա գրեալ է շահն թուղթ յԱսպահան առ Խօջայ Սաֆարն, թէ յազազս շնորհի երեսաց ձերոց՝ եւ ըստ յօժարութեան սրտից ձերոց, առի զնշխարս սրբոցն ձերոց ի Ֆռանկաց՝ եւ պարզեցի ձեզ, եւ արդ՝ առաքեցի առ քեզ յաւանդ պահեստի. արդ՝ ընկալ զդա եւ պահեալ ցորժամ խնդրեցից, բերցես առաջի իմ. եւ Խօջայ Սաֆարն առեալ եւ ընկալեալ ըզնշխարսն եւ ի տան իւրում պատրաստեալ եւ ըստ արժանւոյն սրբութեանցն յամենայն տեղի պատշաճաւոր, եւ ան դէր հանդուցեալ, աւուր պաշտէր զնոսա անուշահոտ խնկօք եւ պայծառ մոմեղինօք, որքան ինքն եւ որդիքն կային, եւ այժմ թոռունք իւր, եւ կայ անդէն մինչեւ ցայսօր» (6), — կը գրէ Գաւրիթեցի, որուն «ցայսօր»ով պէտք է զոնէ 1658 թուականը ընդունիլ, եթէ ոչ աւելի ուշ:

Հոնիփսիմեան նշխարներու Խօջայ Սաֆարի Սպահանի տան պահուելէն քանի մը տարի վերջ, գուցէ 1614-ին, Ս. Լուսաւորչի Աջն ալ Սպահան բերուեցաւ (երբ կը մտադրուէր Շահ Ապպաս Մեծէն էջմիածինը Սպահան փոխադրել):

Գաւրիթեցի այս մասին կը գրէ.

«Եւ յորժամ մերձ եղեն քաղաքին Ասպահանու (Աջարերք) ամենայն ազգն Հայոց, որք կային ի քաղաքն Ասպահան, որոնց եւ հրաման արարեալ էր շահն, իլին ընդ առաջ Լուսաւորչի Աջոյն խաչվառով, եւ աւետարանաւ, խնկօք եւ մոմեղինօք, եւ երգօք եղանակօք, եւ բազում պատուով բերեալ հանդուցին ի տուն Խօջայ Սաֆարին, ընդ նշխարաց սրբ-

բուհւոյ կուսին, եւ ընդ այլոց սրբութեանցն, որք անդ էին»: (Անդ՝ էջ 211):

Այս «ընդ այլոց սրբութեանց» կարգին են անշուշտ Յով. Կարապետի նշխարները, որոնք, ինչպէս Խօջայ Նազարի կեանքին ընթացքին պիտի տեսնենք, գտնուեցան ի Հին Ջուղայ եւ մասամբ բերուեցան ի Նոր Ջուղայ Խօջայ Նազարի շնորհիւ:

1616-ին Խօջայ Սաֆար Սպահան կը գտնուէր, ըստ 1616, մարտ 26-ին Յրա Պէնի-նուսի Սպահանէն Հոռոմ առ Յրա Յով. Գատտալուս գրած նամակին, ուր կը վկայուի թէ՛ «Խօջայ Նազար եւ Խօջայ Սաֆար ինձմէ խնդրեցին որ» հայեր ալ առնէ Կարմեղեանց վանական շինութեանց վրայ աշխատելու համար:

Գաւրիթեցի մանրամասնութիւն մը եւս կ'աւելցնէ՝ հաւաստելով, որ տալիք մանրագէտը իմացած է Ջուղայեցիներէն:

«Յետ ժամանակաց անցելոց պատմութեանց՝ զոր յառաջի պատմեցաք, եկեալ է շահն յԱսպահան, եւ ըստ հանապազորդ սովորութեան իւրում եկեալ է ի տուն Խօջայ Սաֆարին, պատահեալ են եւ անդ տմանք պատրիկք Ֆռանկաց՝ որք էին ի կարգի վերոյ սասցեալ պատրիկ Գլէլումին. (\*) եւ ի մէջ խօսից յիշեալ են զնշխարս սրբոց Հոնիփսիմեանց, եւ բերեալ են զամենայն նշխարս սրբութեանցն Հոնիփսիմեայ առաջի շահին ի տնութիւն ամենեցուն: Եւ յորժամ բացեալ են զնշխարն, յայնժամ պատեհ ժամ գտեալ են պատրիկք. եւ ի շահէն խնդրեալ են իբրեւ զպարզեւս տալ նոցա մասն ինչ ի նշխարացն այնոցիկ: Եւ շահն ինքն առեալ է ոսկր մի յոսկերացն, եւ զայն եւս զանախան հարեալ է եւ կոտրեալ, զկէս ոսկերն զարծեալ ձգեալ է ի մէջ այլ եւս նշխարացն, եւ զկէսն տուեալ է ի պատրիկսն, եւ նորա առեալ են եւ ամփոփեալ յինքեանս: Եւ զայլ եւս նշխարսն զհասարակն, հրամայեալ է Խօջայ Սաֆարին տանել եւ պահել. եւ նա բարձեալ ի միջոյ՝ եւ տարեալ ի

6) Անդ՝ էջ 192:

\*) Բորթուկալցի Հայր Կուլիէլմոս եղբայր Օդոստինեան: